

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՄԻԿ ԷԴՈՒԱՐԴԻ ԴՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Իասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական  
կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ֆիզիկական կուլտուրայի  
հայկական պետական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Գ. Դազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Մ.Մ. Մանուկյան  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու, պրոֆեսոր Ս.Ա. Մարության

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ.Թումանյանի  
անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012թ. սեպտեմբերի 20-  
ին, ժամը 14<sup>00</sup>-ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի Մանկավարժության 020  
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2012թ. օգոստոսի 20-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա.Վ. Ավագյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Մանկության առաջին տարիները մարդու կյանքի ողջ ընթացքի համեմատ շատ կարճ են, սակայն անկրկնելի և վճռորոշ են իրենց նշանակությամբ: Երեխայի զարգացման վաղ տարիներին են տեղի ունենում ամհատի բնավորության հիմնական գծերի, ընդունակությունների, ազգային, ընտանեկան ավանդույթների և սովորությունների կրողի նպատակաուղղված ձևավորումն ու զարգացումը:

Ներկայումս երեխաների առողջության ամրապնդման և պահպանման խնդիրն ընդգրկվում է յուրաքանչյուր պետության ռազմավարական ծրագրերում:

Երեխաների առողջական վիճակի ամրապնդման և պահպանման խնդրի լուծման համար կարևորվում է ֆիզիկական դաստիարակության միջոցների համակարգված կիրառումն ընտանիքում:

Բժշկամանկավարժական հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխաների 90 տոկոսը ծնվում են տարբեր շեղումներով, իսկ ֆիզիկապես թերզարգացած, անհաս երեխաների քանակը վերջին 20 տարիների ընթացքում 18 տոկոսից բարձրացել է մինչև 98 տոկոսի (Г.А.Решетнева, О.С.Шнейдер, 2002): Նախադպրոցական կրթական հաստատություն հաճախող երեխաների միայն 16 տոկոսին կարելի է համարել առողջ (А.И.Аршавский, 1982, А.Баранов, 2009): Անհանգստացնող է նաև այն հանգամանքը, որ երեխաների զգալի մասն ունեն կեցվածքի շեղումներ, հարթաթաթություն, ֆիզիկական թերզարգացում, տարբեր ձևերի ու բարդությունների սկոլիոզներ (А.В.Гасков, А.Е.Павлов, 2000; С.О.Филиппова, 2000):

Հայտնի է, որ երեխայի առողջության, ֆիզիկական, սոցիալական զարգացման և շարժողական գործողությունների ձևավորման հիմքը դրվում է վաղ հասակից՝ հիմնականում ընտանեկան դաստիարակության շնորհիվ:

Հայաստանի Հանրապետությունում արդի ժամանակաշրջանում քաղաքային համայնքներում նախադպրոցականների միայն 35-40 տոկոսն է հաճախում նախադպրոցական կրթական հաստատություններ, իսկ գյուղական համայնքներում՝ մինչև 20 տոկոսը: Փաստորեն, վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների մեծամասնության ֆիզիկական դաստիարակության ապահովումը մնում է ընտանիքի հույսին:

Ծննդյան առաջին իսկ օրվանից երեխայի խնամքը, նրա սնման, ֆիզիկական, մտավոր և սոցիալական զարգացման գործընթացի ճիշտ կազմակերպումը ծնողներից պահանջում է անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, դիրքորոշումներ և համոզմունքներ:

Սակայն գիտահետազոտական բազմաթիվ աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտանիքում վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը՝ որպես աճող սերնդի դաստիարակության արժեքավոր և անփոխարինելի կողմ, դեռ չի գտել իր ուրույն տեղն առօրյա կյանքում (Յու.Գ.Գրիգորյան, 1997, Շ.Վ.Антонюк, 2003, А.В.Сычев, 2004):

Եթե երեխայի վաղ և նախադպրոցական տարիքում մերսումը, կոփման ընթացակարգերը, շարժախաղերը, ֆիզիկական վարժությունները չդառնան սովորույթ, եթե այդ տարիքային շրջանում նրանք ձեռք չբերեն իրենց տարիքին համապատասխան անհրաժեշտ շարժողական կարողություններ և հմտություններ, ապա հետագայում դժվար կլինի բարելավել նրանց առողջությունը, ապահովել ներդաշնակ ֆիզիկական զարգացումը և համակողմանի ֆիզիկական պատրաստվածությունը:

Եկել է ժամանակը, որ վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի և դաստիարակության հարցերով զբաղվի ոչ միայն մայրը, այլ նաև հայրը, տատիկն ու պապիկը: Այսինքն, ընտանիքի բոլոր անդամները պետք է գիտակցեն իրենց գործունեության անհրաժեշտությունն ու մասնակցությունը փոքրիկի ձևավորման և զարգացման գործընթացում:

Վերջին տարիներին ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում նկատվում է բնակչության կրթվածության ցածր մակարդակ, հետևաբար և ավելի է կարևորվում տեսական գիտելիքների դերն ազգաբնակչության տարբեր զանգվածներին ֆիզկուլտուրային շարժման մեջ ընդգրկելու համար (Գ.Գ.Սարգսյան, 2002, Ա.Լ.Գրիգորյան, 2003, Ա.Պ.Մարտիրոսյան, 2006, Յու.Գ.Գրիգորյան, 2007):

Այսպիսով, հենց վերը նշված հարցերի փորձագիտական հետազոտությունն ընդգծում է տվյալ աշխատանքի արդիականությունը:

**Ատենախոսության նպատակը:** Տեսականորեն հիմնավորել և փորձարարական աշխատանքով հաստատել 2-4 տարեկան երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության իրականացման ուղիներն ու գործոնները:

**Հետազոտության օբյեկտն** ընտանիքում վաղ տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակությունն է:

**Հետազոտության առարկան**՝ ծնողների և ընտանիքի մեծահասակների տեսական գիտելիքների հաղորդման և գործնական կարողությունների ձևավորման մեթոդիկան է, որն օգնում է նրանց իրականացնելու վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը:

**Ատենախոսության գիտական վարկածը** ենթադրում էր, որ վաղ տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության արդյունավետ

իրականացումը պայամանավորված է նախադպրոցական կրթական հաստատության և ընտանիքի համատեղ գործունեությամբ, ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացմամբ, որն առավելապես կնպաստի երեխաների կենսական անհրաժեշտ հիմնական շարժողական գործողությունների տիրապետմանը, ֆիզիկական զարգացմանը և շարժողական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

**Հետազոտության խնդիրները:** Ելնելով աշխատանքի իրականացման սցենարական պահանջից և տրամաբանությունից, առաջադրված հիմնահարցի արդիականությունից, վարկածից և կոնկրետ դրույթներից նախատեսել ենք հետևյալ փոխշաղկապված խնդիրների լուծումը.

1. բացահայտել վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ ծնողների և ընտանիքի մեծահասակների գիտելիքների մակարդակը և կարողությունները,

2. մշակել և գործնականում փորձարկել վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման թեմատիկ ծրագիր և համապատասխան մեթոդական մոտեցումներ,

3. փորձարկել և հիմնավորել ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման մեթոդիկական ընտանեկան պայմաններում վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության արդյունավետ կազմակերպման գործում:

**Հետազոտության մեթոդաբանական հիմք** են ծառայել հայտնի մանկավարժների և հոգեբանների տեսական դրույթները (А.В.Запорожец, Т.А.Маркова, 1980; Т.Ю.Логвина, 1991; Է.Ա.Ալեքսանդրյան, 1992; Մ.Ա.Մարության, Ա.Մ.Գալլաբյան, 2005; Հ.Մ.Մախչանյան, Ա.Ս.Մանուկյան, 1997; Ա.Ս.Մանուկյան, Ա.Ս.Մանուկյան, 2000; Ս.Պ.Մանուկյան, 2002, Գ.Ե.Ղույումչյան, 2005 և այլք), օնտոգենիկ զարգացման հանրահայտ օրինաչափությունները (Ս.Կ.Կարապետյան, Ս.Ա.Շախրերյան, 1981; А.И.Аршавский, 1982), տարիքային հոգեբանության (Մ.Ա.Մազմանյան, 1975; Ա.Վ.Պետրովսկի, 1983; Л.Ф.Обухова, 1997; В.С.Мухина, 1998), ընտանեկան դաստիարակության (П.Ф.Лесгафт, 1988; Ա.Ս.Մակարենկո, 1985; Վ.Ա.Սուխոմլինսկի, 1979; Ա.Ա.Չատինյան, Մ.Ա.Ուռյան, 2009), ֆիզիկական դաստիարակության (Յու.Գ.Գրիգորյան, 1997; Ֆ.Գ.Ղազարյան, Ա.Ա.Գրիգորյան, 2003; Т.И.Осокина, 1986; Д.В.Хухлаева, 1984; А.С.Хачатурян, 2002; Э.Я.Степаненкова, 2006; Л.П.Матвеев, 2008; С.О.Филиппова, Г.Н.Пономарева, 2008) հիմնարար դրույթները:

**Հետազոտության մեթոդները:** Առաջադրված խնդիրների լուծման համար ընտրվել են համապատասխան հետևյալ մեթոդները. գրական աղբյուրների տեսական ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանրացում, սոցիոլոգիական հարցում՝ անկետավորում և հարցազրույց, կոնտենտ անալիզ, մարդաչափություն (անթրոպոմետրիա), շարժողական ակտիվության ծավալի գնահատում, մանկավարժական թեստավորում, մանկավարժական գիտավորժ, մաթեմատիկական վիճակագրություն:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքում լուծված են մի շարք հարցեր, որոնք դեռևս լուսաբանված չեն եղել մեր երկրի նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հետազոտություններում.

1. բացահայտված են ծնողների և ընտանիքի մեծահասակների գիտելիքները և կարողությունները 2-4 տարեկան երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ,

2. մշակված, փորձարկված և ներդրված է վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների և ընտանիքի մեծահասակների գիտելիքների և կարողությունների ձևավորման մեթոդիկան՝ թեմատիկ ծրագրի տեսքով,

3. ներդրված է մանկավարժական ներգործության համակարգ՝ ծնողների, ընտանիքի մեծահասակների և նախադպրոցական կրթական հաստատությունների դաստիարակների ֆիզկուլտուրային կրթվածության ձևավորման համար:

**Հետազոտության տեսական նշանակությունը:** Հիմնավորվել է վաղ տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության իրականացման անհրաժեշտությունը և մանկավարժական պայմանները:

**Հետազոտության գործնական նշանակությունը** կայանում է ընտանեկան պայմաններում նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացման, ծնողների և ընտանիքի մեծահասակների տեսական գիտելիքների մակարդակի բարձրացման, այդ նպատակով հատուկ ծրագրի ներդրման, երեխաների շարժողական ակտիվության և պատրաստվածության բարձրացման մեջ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության համակարգում (ծրագրում), ինչպես նաև առողջարարական կենտրոններում, պոլիկլինիկաներում, այլ տիպի կրթական հաստատություններում, որոնք զբաղվում են 2-4 տարեկան երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջության ամրապնդման, պահպանման հարցերով:

**Հետազոտության հիմնավորվածությունը և հավաստիությունը:** Ապացուցված է բժշկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիոլոգիական, մանկավարժական

մեթոդաբանական դրույթների համակցությունը՝ գիտահետազոտական մեթոդների ընտրությամբ և գործադրմամբ, մանակավարժական գիտափորձի տևողությամբ, հետազոտվողների անհրաժեշտ քանակակազմով, սոցիոլոգիական հարցման ճշգրիտ մշակման համակարգով, ծնողների, ընտանիքի մեծահասակների, դաստիարակների և երեխաների շրջանում տարված գործնական և տեսական պարապմունքներով, ստացված հետազոտական նյութերի մաթեմատիկական ճշգրիտ մշակմամբ:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը:** Հետազոտության արդյունքները զեկուցվել են Հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսներում, ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի 2004-2008թթ. գիտաժողովներում, «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա և առողջ ապրելակերպ» հանրապետական գիտաժողովում, «Ֆիզիկական կուլտուրայի զարգացումը առաջատար կիրառական տեխնոլոգիաների միջոցով» հանրապետական գիտագործնական կոնֆերանսում, Միջազգային 2 կոնֆերանսներում (Երևան, 2003; Կիև, 2005):

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևան քաղաքի թիվ 9 և 33 նախադպրոցական կրթական հաստատություններում և առկա են համապատասխան ակտեր:

### **Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.**

1. Ծնողների և մեծահասակների գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումը որպես վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության իրականացման նախադրյալ:

2. Վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման տեսական և գործնական աշխատանքային ծրագրերը որպես ընտանեկան ֆիզիկական դաստիարակության կազմակերպման պայման:

3. Նախադպրոցական կրթական հաստատության և ընտանիքի համագործակցությունը որպես 2-4 տարեկան երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման միջոց:

**Առենախոսության կառուցվածքը և ծավալը:** Աշխատանքը շարադրված է համակարգչային 141 էջում: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, ընդգրկում է 16 աղյուսակ, 21 նկար և 7 հավելված: Գրականության ցանկում բերված են մատենագիտական 202 սկզբնաղբյուրներ:

**Ներածության** մեջ հիմնավորված է հետազոտման թեմայի արդիականությունը, ընտրված է աշխատանքի նպատակը, սահմանված է հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրներն ու մեթոդները: Բացահայտված է գիտական նորությունը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

**Առաջին գլուխը՝** «Հիմնախնդրի վիճակը» բաղկացած է չորս ենթաբաժիններից, որոնցում քննարկվում են վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության սոցիալական նախադրյալները, նշանակությունը, ընտանիքի մեծահասակների մասնակցությունը երեխաների դաստիարակության և ֆիզիկական դաստիարակության գործընթացին:

Գրական աղբյուրների վերլուծությունը հնարավորություն է ընձեռնել վերհանել վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական, հոգեկան և առողջական վիճակների բնութագրերը /С.Сердюковская, А.Баранов, 1985; А.Баранов 2009; Р.Стеркина, 1996; М.Рунова, И.Бурба, 2005/: Նույնիսկ ամենազարգացած երկրներում երեխաները հաճախ են հիվանդանում և նրանց առողջության ամրապնդման հարցը ժամանակակից հասարակությանն ամենահուզող հիմնախնդիրներից է: Հիվանդության պատճառներից մեկն է ծնողների գիտելիքների ցածր մակարդակը երեխաների դաստիարակության և խնամքի բժշկահիգիենիկ հարցերի, ֆիզիկական դաստիարակության պահանջների, առողջ ապրելակերպի վերաբերյալ: Նման գիտելիքների և կարողությունների բացակայության պատճառով այսօր ընտանեկան պայմաններում երեխաները չեն ստանում իրենց տարիքային զարգացման օրինաչափություններին համապատասխան համակողմանի դաստիարակություն:

Անուշտ երեխաների հաճախակի հիվանդանալու պատճառներից մեկն էլ ծնողների առողջական վատ վիճակն է, որը մտահոգում է բազմաթիվ մասնագետների /Ֆ.Գ.Ղազարյան, 2007; Л.Н.Дроздова, Н.Т.Селезнева., 2007; Л.А.Дургарян, 2007; Р.Г.Узянбаева, 2007; М.Я.Виленский, С.О.Авчинникова, 2004; Л.П.Борисова, 2005/, ինչպես նաև ընտանիքի ապրելակերպը, հոգեբանական մթնոլորտը, սովորությունները, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները:

Մանկավարժության պատմության մեջ միշտ էլ բարձր է գնահատվել ընտանեկան դաստիարակության դերը և նշանակությունը /П.Ф.Лесгафт, 1988; Մ.Ա.Մակարենկո, 1985; Վ.Ա.Սուխոմլինսկի, 1979; Բ.Սպոք, 1991; Է.Ա.Ալեքսանդրյան,



1990; Մ.Ս.Մարության, Ա.Մ.Դալլաքյան, 2005; Մ.Ա.Մազմանյան, 1975/ երեխաների դաստիարակության գործընթացում;

Մյուս կողմից ընտանեկան մանկավարժության մասնագետները /Ю.П.Азаров, 1985; И.В.Гребенников, 1985; В.Я.Титаренко, 1987/ փաստում են, որ ծնողներն ունենալով դաստիարակության մեծ ներուժ, ոչ բոլոր դեպքերում են այն լիարժեք կիրառում՝ դեռևս մանկավարժական ցածր կուլտուրայի պատճառով:

Մինչ այժմ ընտանեկան ֆիզիկական դաստիարակությանը վերաբերվող ատենախոսական աշխատանքներն ուղղված են եղել մշակելու և հիմնավորելու աշակերտների ֆիզիկական դաստիարակության դերը, նշանակությունը, խնդիրները, կարևորելով ձևերի, մեթոդների և միջոցների ավելի լայն կիրառումը ընտանեկան պայմաններում /А.Арифбаев, 1979; А.К.Атаев, 1984; А.В.Мерлян, 1994; Ա.Պ.Մարտիրոսյան, 2006/:

Սակայն վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության հարցերը լինելով անչափ կարևոր և արդիական, դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն և պահանջվում է կատարել սոցիալ-մանկավարժական հետազոտություն:

**Երկրորդ գլխում՝** «Նախադպրոցականների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության էությունն ու նշանակությունն ըստ սոցիոլոգիական հարցման արդյունքների» ներկայացված են հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը, կատարված է փաստագրող գիտափորձի արդյունքների վերլուծություն: Ուսումնասիրվել է վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման հարցերն ընտանիքում, ընտանիքի անդամների (ծնողներ, մեծահասակներ) մասնակցությունն այդ գործընթացին, դաստիարակների պատրաստությունը երեխաների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործընթացում, երեխաների շարժողական ակտիվությունը նախադպրոցական կրթական հաստատությունում:

Երևան քաղաքի և Սյունիքի մարզի ծնողների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքում բացահայտվել է ծնողների և ընտանիքի մեծահասակների տեսական գիտելիքների և կարողությունների ցածր մակարդակը վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության հանգուցային հարցերում: Հարցման արդյունքները վերլուծությունը ցույց տվեց, որ նրանք կարողանում են նկարագրել իրենց երեխայի շարժողական գործողությունների ձևավորման և զարգացման ընթացքը, բայց միևնույն ժամանակ պարզվեց, որ երեխաների ընդհանուր /օնտոգենետիկ/ զարգացումն (քայլք, խոսք, ինչպես նաև

կենցաղային շարժումներ) ընթանում է սահմանված ժամկետներից ուշ, քանի որ ծնողները նպատակաուղղված չեն օժանդակում երեխայի զարգացման գործընթացին:

Երեխայի դաստիարակության, աճի, զարգացման, առողջության ամրապնդման և հիմնական շարժողական գործողությունների ձևավորման կարևոր նախադրյալ է հանդիսանում գիտականորեն հիմնավորված ռեժիմի (այդ թվում՝ շարժողական ռեժիմի) պահպանումը: Հարցումը ցույց տվեց, որ ծնողների 77,1 տոկոսը խախտում է երեխայի քնի ռեժիմը, 61,4 տոկոսը՝ կերակրման ռեժիմը, 30,3 տոկոսը՝ հիգիենիկ ընթացակարգերը (պրոցեդուրաները), 59,6 տոկոսը՝ զբոսանքն ու խաղը:

Ընտանեկան պայմաններում երեխաների առողջության ձևավորումն ու ամրապնդումը հեռու է բավարար լինելուց: Այսպես, Երևան քաղաքի հարցվածների միայն 23,7 տոկոսը հստակ պատասխանեց, որ կարող են կոփել իրենց երեխաներին, 66,5 տոկոսը՝ չեն կարող և 9,7 տոկոսը դժվարացել են պատասխանել, Սյունիքի մարզում համապատասխանաբար՝ 22,7 տոկոս, 69,0 տոկոս և 8,2 տոկոս: Այս հարցի պատասխաններին պետք է առանձնակի ուշադրություն դարձնել, քանզի ծնողները դրսևորում են զգուշություն կոփման միջոցների կիրառման ժամանակ և այդ զգուշության հիմնական պատճառը նրանց պատրաստվածության ցածր մակարդակն է:

Ավելի ցածր արդյունքներ են արձանագրվել երեխաներին մերսելու վերաբերյալ: Երևան քաղաքի հարցվողների միայն 18,2 տոկոսն է պատրաստ մերսել երեխային, 70,0 տոկոսը՝ պատրաստ չեն և 11,7 տոկոսը դժվարացել է պատասխանել: Սյունիքի մարզում ստացել ենք համապատասխանաբար՝ 10,0; 73,6 և 15,4 տոկոս: Հետազոտության արդյունքները փաստում են այն իրողությունը, որ մի կողմից ծնողները ցանկանում են, որ իրենց երեխաները լինեն առողջ, կայտառ, ամրակազմ և բարձր են գնահատում ֆիզիկական դաստիարակության միջոցների դերն այդ գործընթացում, մյուս կողմից՝ նրանք դա չեն կիրառում, որովհետև պատրաստության աստիճանն այդ հարցերում գտնվում է ցածր մակարդակի վրա և չեն դրսևորում նախաձեռնություն:

Ծնողների պատրաստության աստիճանը շարժախաղեր ուսուցանելու վերաբերյալ՝ ի տարբերություն մերսման և կոփման, մի փոքր ավելի բարձր է: Երևան քաղաքի հարցված ծնողների 36,5 տոկոսը կարող է երեխաներին ուսուցանել շարժախաղեր վազքով, 22,9 տոկոսը՝ ցատկերով, 28,2 տոկոսը՝ սողանցումով և նետումով՝ 31,2 տոկոսը: Սյունիքում ստացել ենք համապատասխանաբար՝ 40,9, 34,7, 17,3 և 35,4 տոկոս: Հարցումը ցույց տվեց նաև, որ ծնողների կարողությունները և գիտելիքները երեխաներին խաղային վարժություններ և շարժախաղեր ուսուցանելու հարցերում բավարար չէ, նրանք չեն կարողացել թվարկել այն շարժախաղերը, որոնք

նախատեսված են երեխաների ֆիզիկական դաստիարակության պետական ծրագրով:

Ուրախալի է փաստագրել, որ Երևան քաղաքի երիտասարդ ծնողների 75,3 տոկոսը և Սյունիքի մարզի 69,1 տոկոսը միանշանակ գտնում են, որ երեխայի համակողմանի զարգացումը պայմանավորված է նաև ֆիզիկական դաստիարակությամբ, Երևանի ծնողների 18,2 տոկոսը և Սյունիքի ծնողների 25,4 տոկոսը այդպիսի կապ չեն տեսնում, իսկ մյուսները, համապատասխանաբար՝ 6,4 տոկոսը և 5,4 տոկոսը դժվարացել են պատասխանել: Այն հարցին, թե զբաղվում են, արդյոք, իրենց երեխայի ֆիզիկական դաստիարակությամբ, Երևանի ծնողների 58,2 տոկոսը տվել է դրական պատասխան, 32,3 տոկոսը՝ զբաղվում է դեպքից դեպք, 9,4 տոկոսը՝ չի զբաղվում, իսկ Սյունիքում ստացել ենք համապատասխանաբար՝ 63,6, 18,2 և 18,2 տոկոս արդյունքներ: Հարցման նման արդյունքները կարելի էր համարել գոհացուցիչ, սակայն նրանք չկարողացան թվարկել այն միջոցները, որոնք կիրառում են երեխայի ֆիզիկական դաստիարակության գործընթացում, պարզվեց, որ և՛ Երևան քաղաքի, և՛ Սյունիքի մարզի ծնողների միայն 6,1 տոկոսն են կարողացել թվարկել 4 միջոցներ, 11,1 տոկոսը՝ 3 և 13,9 տոկոսը՝ 1-2 միջոց:

Այս պարագայում շատ կարևոր էր ճշտել գիտելիքների բացը ընտանիքի անդամները լրացնում են ինքնակրթությամբ, թե ոչ: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ նրանք գործնականում շատ քիչ են օգտվում ֆիզիկական կուլտուրայի լրատվական աղբյուրներից՝ մարզական պարբերական մամուլ, ընդհանրապես չեն ընթերցում ծնողների, տատիկների ու պապիկների 80 տոկոսից ավելին: Վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ հատուկ գրականություն, ցավոք, պարբերաբար ընթերցում են Երևան քաղաքի հարցված ծնողների 14,7 և Սյունիքի մարզի՝ 9,1 տոկոսը, Երևան քաղաքի հարցված մեծահասակների 9,1 տոկոսը, իսկ Սյունիքի մարզում մեծահասակները դժվարացել են պատասխանել այս հարցին:

Ընտանեկան դաստիարակության, այդ թվում ֆիզիկական դաստիարակության ավանդույթները, որոնք հայ ընտանիքներում գալիս են դարերի խորքից, ունեն մանկավարժական, բարոյական, սոցիալական մեծ արժեք: Եվ այդ ամենը նոր ոճով, նոր ձևով ներկա սերնդին հաղորդելը, փոխանցելը և արմատավորելը բացառիկ կարևոր նշանակություն ունի:

Ուրախալի է նաև այն փաստը, որ ծնողներն ու ընտանիքի մեծահասակները դրսևորել են իրենց դրական դիրքորոշումն ընտանիքում վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության իրականացման վերաբերյալ, միաժամանակ ակնկալելով երեխայի առողջական վիճակի բարելավում: Նրանք

իրենց պատրաստակամությունն են արտահայտել հաճախելու նախադպրոցական կրթական հաստատություններ (24,1%), մանկական պոլիկլինիկա (31,7%), նույնիսկ բնակավայրերին մոտ գտնվող առանձին վճարովի ծառայություն (53,9%), որոնք կօգնեն իրենց երեխայի առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, օրգանիզմի կոփման հարցերում:

Տվյալ գլխում ուսումնասիրվել է նաև վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների շարժողական ակտիվության ծավալը և պարզել, որ այդ ցուցանիշները ցածր են տվյալ տարիքի երեխաների շարժողական ակտիվության ԱՊՀ որոշ երկրների սահմանած նորմերից (Յ.Ս.Вильчковский - Ուկրաինա, В.Н.Шебеко, В.А.Шишкина и др. - Բելառուս, О.А.Скоролупова - Ռուսաստան): Այստեղից հարկ է եզրակացնել, որ նախադպրոցական կրթական հաստատությունը չի ապահովում երեխաների շարժողական ակտիվության օրական բնական պահանջը: Այս երևույթը խիստ անհանգստացնող է և նախադպրոցական կրթական հաստատությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ այն շտկելու համար: Հայտնի է նաև, որ այն երեխաները, որոնք գտնվում են հիպոդինամիայի ազդեցությամբ, ավելի հաճախ են հիվանդանում շնչառական, վիրուսային, մրսածության հիվանդություններով, ցածր է նրանց ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ծնողները ցանկություն ունեն համագործակցել նախադպրոցական հաստատության հետ: Ուստի դաստիարակների կարողություններն ուսումնասիրելիս, բացահայտվեց, որ նախադպրոցական հաստատություններում չեն կազմակերպվել ֆիզկուլտուրային բաց պարապմունքներ, տեսական և գործնական աշխատանքներ ծնողների հետ, չեն անկացրել առավոտյան մարմնամարզություն, կոփում, մերսում, շարժախաղեր: Դաստիարակների մեծամասնությունը դժվարացել են տալ դրական պատասխան և ինչպես երևում է հարցումից, նրանք այս կարևոր հարցին անտարբեր վերաբերմունք են ցուցաբերում: Գլխավոր պատճառն այն է, որ ընտանիք - նախադպրոցական կրթական հաստատություն համագործակցության հիմնահարցը առավել խորը ուսումնասիրման կարիք ունի: Այսպիսով վերը բացահայտված փաստերը թելադրեցին կազմակերպել ձևավորող մանկավարժական գիտափորձ՝ նպատակ ունենալով մշակել ծնողների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման ռեսական ու գործնական ծրագրերը, փորձարկել գործնականում, ակտիվացնել դաստիարակների աշխատանքն ընտանիքի անդամների՝ ծնողների և մեծահասակների հետ:

**Երրորդ գլխում՝** «Ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման արդյունավետությունը. մանկավարժական գիտափորձ» քննարկված է ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման աշխատանքային ծրագրի ներդրման արդյունքները, երեխաների ֆիզիկական զարգացման տվյալների փոփոխությունը և հիմնական շարժումների ցուցանիշների դինամիկան մանկավարժական գիտափորձի ընթացքում:

Մանկավարժական գիտափորձի նպատակն էր նախադպրոցական կրթական հաստատության հետ համատեղ աջակցել ծնողներին և ընտանիքի մեծահասակներին՝ կազմակերպելու վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունն ընտանիքում: Գիտափորձի նպատակի իրականացումը առաջադրում էր լուծել հետևյալ մասնակի խնդիրները՝ մշակել վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ ծնողների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների բովանդակությունը, կազմակերպել, համակարգել և հսկել նախադպրոցական կրթական հաստատություններում ծնողների և ընտանիքի մեծահասակների հետ տարվող տեսական և գործնական աշխատանքները, ծրագրավորել, փորձարկել և բացահայտել ընտանեկան պայմաններում վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության արդյունավետությունը:

Մանկավարժական գիտափորձն անցկացվել է 2007-2009թթ., Երևանի թիվ 2, 6, 9 և 33 մսուր-մանկապարտեզներում, որում ընդգրկված են եղել 2-4 տարեկան 66 երեխա:

Մշակված տեսական և գործնական թեմատիկ ծրագրերն իրականացվել են նախադպրոցական կրթական հաստատությունում և ընտանիքում: Երեխաների և ընտանիքների անդամների հետ իրականացվել են աշխատանքային հետևյալ ձևերը՝ ծնողական ժողով, դասախոսություն, զրույցներ, պրակտիկումներ՝ ուսուցողական ուղղվածությամբ, ֆիզկուլտուրային պարապմունքների, առավոտյան մարմնամարզության, համատեղ ֆիզկուլտուրային վարժությունների, կոփման և մերսման վերաբերյալ պրակտիկումներ, տնային հանձնարարություններ, մեթոդական գրականության վերաբերյալ տեղեկատվության հաղորդում, երկխոսություններ ուղղված ընտանեկան ֆիզիկական դաստիարակության փորձի փոխանակմանը, տեսաֆիլմերի դիտում, հաճախում ընտանիքներ: Ի լրումն վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության ծրագրի՝ ծնողներն ու ընտանիքի մեծահասակները երեխաների հետ պետք է անցկացնեին առավոտյան հիգիենիկ մարմնամարզության 264 պարապմունք, համատեղ ֆիզիկական վարժությունների 264 պարապմունք, ֆիզկուլտուրային պարապմունքների 264 պարապմունք, շարժախաղերի 264

պարապմունք, մերսման 204 սեանս, կոփման ընթացակարգերի անցկացում՝ 264 անգամ, զբոսանք՝ 528անգամ. (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Նախադպրոցական կրթական հաստատությունում և ընտանիքում նախատեսվող ֆիզիկական կուլտուրայի ձևերի և միջոցների անցկացման քանակը**

Հ/հ	Ֆիզիկական կուլտուրայի ձևեր և միջոցներ	Անցկացման ժամանակահատվածը և քանակը				
		2007 սեպտեմբեր-դեկտեմբեր		2008 հունվար	2008 փետրվար-հունիս	
		Աշխատանքային օրեր	Շաբաթ, կիրակի		Աշխատանքային օրեր	Շաբաթ, կիրակի
1	Առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն	80	32	30	100	40
2	Ֆիզկուլտուրային պարապմունքներ	48	32	30	60	40
3	Համատեղ ֆիզիկական վարժություններ	-	32	30	-	40
4	Շաբաթափաղեր	80	32	30	100	40
5	Զբոսանք	160	64	60	200	80
6	Մերսում	-	32	15	-	40
7	Կոփում	80	32	30	100	40

Ֆիզիկական կուլտուրայի նշված ձևերն ու միջոցները առաջարկվում էր ընտանիքի անդամներին առավելապես կիրառել շաբաթ, կիրակի և արձակուրդային օրերին:

Փորձարարական նախադպրոցական կրթական հաստատությունում ձևավորվեց մեթոդական անկյուն՝ հագեցված անհրաժեշտ նյութերով, յուրաքանչյուր երեխայի համար մատյան, որտեղ գրանցվում էին ծնողներին տրված առաջադրանքների պահանջները: Յուրաքանչյուր ծնողի հնարավորություն ընձեռվեց ունենալ «Երեխայի զարգացման ընթացքի տետր», որում ծնողներն ըստ երեխայի տարիքի՝ նշումներ էին կատարում նրանց ֆիզիկական զարգացման, հիմնական շարժողական գործողությունների տիրապետման վերաբերյալ:

Ծրագրերի իրականացման ընթացքն ուսումնասիրելու նպատակով գիտափորձից առաջ և հետո հարցում ենք անցկացրել փորձարարական խմբի երեխաների ծնողների և ընտանիքի մեծահասակների շրջանում (աղյուսակ 2):

Բացահայտվեց, որ գիտափորձից հետո էական տեղաշարժեր են կատարվել առաջադրված ֆիզիկական դաստիարակության միջոցների և ձևերի կիրառման ուղղությամբ: Եթե մինչ գիտափորձը ծնողների միայն 6,1 տոկոսն էր հաճախակի

զբաղվում երեխաների հիգիենիկ մարմնամաքոթյամբ, ապա գիտափորձից հետո 75,4 տոկոսն սկսեցին զբաղվել պարբերաբար և 23,1 տոկոսը՝ երբեմն:

Աղյուսակ 2

**Ընտանեկան պայմաններում ֆիզկուլտուրային միջոցների և ձևերի կիրառումը գիտափորձից առաջ և հետո (տոկոսներով)**


Հ/հ	Ֆիզիկական կուլտուրայի միջոցներ և ձևեր	Անցկացման հաճախականությունը	Ուսումնասիրության ժամանակահատվածը			
			Մեպտեմբեր 2007		Մայիս 2009	
			Ծնողներ	Տատիկներ, պապիկներ	Ծնողներ	Տատիկներ, պապիկներ
1	Առավոտյան հիգիենիկ մարմնամաքոթյուն	հաճախակի	6,1	-	75,4	51,2
		երբեմն	10,8	2,4	23,1	17,1
2	Ֆիզկուլտուրային պարապմունքներ	հաճախակի	1,5	-	63,1	19,5
		երբեմն	4,6	2,4	32,3	36,6
3	Համատեղ ֆիզիկական վարժություններ	հաճախակի	3,1	2,4	84,6	65,8
		երբեմն	7,7	4,8	15,4	21,9
4	Շարժախաղեր	հաճախակի	10,8	4,8	84,6	29,3
		երբեմն	10,8	4,8	15,4	53,6
5	Զբոսանք	հաճախակի	21,5	19,5	96,9	70,7
		երբեմն	26,1	29,3	3,1	17,1
6	Մերսում	հաճախակի	1,5	-	58,5	17,1
		երբեմն	4,6	4,8	41,5	24,4
7	Կոփում	հաճախակի	9,2	4,8	78,4	9,7
		երբեմն	13,8	7,3	21,5	34,1
8	Ռեժիմի պահպանում	հաճախակի	3,1	4,8	90,8	49,0
		երբեմն	35,4	31,7	9,2	41,5

Ստացված տվյալների վերլուծությունը պարզորոշ ցույց է տալիս, որ եթե մինչ գիտափորձը ծնողների մոտ 83 տոկոսը երեխաների հետ չեն անցկացրել առավոտյան մարմնամաքոթյուն, ապա գիտափորձից հետո դրանում ընդգրկվել են բոլոր ծնողները:

Երկամյա մանկավարժական գիտափորձի ընթացքում ուսումնասիրվել է մասնախաղարոցականների մի շարք հիմնական շարժումների դինամիկ տեղաշարժերը: Մանկավարժական գիտափորձի այս փուլի արդյունքներն ակնհայտ վկայում են մշակված և գործնականում ներդրված հատուկ ծրագրի արդյունավետությունը, որը նպաստում է ոչ միայն անձի ֆիզիկական կուլտուրայի ձևավորմանը, այլև ծնողների ֆիզկուլտուրային գրագիտության բարձրացմանը: Ստացված արդյունքները թելադրում են մշակված ծրագրի ներդրման անհրաժեշտությունը՝ ընտանեկան դաստիարակության պայմաններում մասնախաղարոցականների ֆիզիկական դաստիարակության կատարելագործման նպատակով:

Գիտափորձից հետո պարզվեց, որ կիրառված մանկավարժական մոտեցումները չխոչընդոտեցին երեխաների ֆիզիկական զարգացմանը: Երեխաների հասակի ու քաշի բնականոն աճ նկատվում է ինչպես փորձարարական, այնպես էլ ստուգողական խմբերում:

Մանկավարժական ներգործությունների արդյունքում փորձարարական խմբում ընդգրկված թե՛ տղաների, և թե՛ աղջիկների կրծքավանդակի շրջագծի աճի ցուցանիշներն ավելի բարձր էին, քան ստուգողական խմբում (նկար 1): Երեխաների կրծքավանդակի շրջագծի ցուցանիշների աճը պայմանավորված է վերին վերջույթների համար առաջադրված ֆիզիկական վարժությունների (առարկաներով և առանց առարկաների), հատուկ շնչառական վարժությունների ակտիվ և պասիվ կատարմամբ, ինչպես նաև մարմնի տարբեր հատվածների, այդ թվում կրծքավանդակի մերսմամբ: Այսպիսով, կիրառված առաջադրանքները նպաստել են երեխաների կրծքավանդակի շրջագծի ավելի ակտիվ աճին:





**Նկար 1. Երեխաների կրծքավանդակի շրջագծի ցուցանիշների փոփոխությունը երկամյա գիտափորձի ընթացքում**  
**Ա - ստուգողական խումբ, Բ - փորձարարական խումբ**



2-4 տարեկան երեխաների շարժողական պատրաստվածության ցուցանիշների դինամիկան պատկերված է թիվ 2 նկարում:

Երկամյա գիտափորձի արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փորձարարական խմբում արագաշարժության ցուցանիշներն ավելի բարձր են (տեղաշարժը՝ տղաներ՝ 2,4վրկ, աղջիկներ՝ 2,2վրկ), քան ստուգողական խմբում (տեղաշարժը՝ տղաներ՝ 1,7վրկ, աղջիկներ՝ 1,4վրկ): Փորձարարական խմբի տղաների տեղից հեռացատկի ցուցանիշներն աճել են 42,40 սմ-ով, աղջիկներինը՝ 39,70 սմ-ով, իսկ ստուգողական խմբում՝ համապատասխանաբար՝ 21,40 սմ-ով և 19,60 սմ-ով: Նետման ցուցանիշները և՛ ստուգողական, և՛ փորձարարական խմբերում զգալի աճել են:









Վազք 10 մ



Տեղից հեռացաով



Նետում

Նկար 2. Երեխաների 10մ վազքի, տեղից հեռացաովի և նետման ցուցանիշների փոփոխությունը երկամյա գիտափորձի ընթացքում  
 Ա - ստուգողական խումբ, Ք - փորձարարական խումբ

Սակայն, աճի տեմպերը փորձարարական խմբում ավելի բարձր են. այսպես, փորձարարական խմբի տղաների աջ ձեռքի նետման արդյունքը բարելավվել է 131,50սմ-ով, ստուգողական խմբում՝ աճը կազմել է 105,90սմ, իսկ ձախ ձեռքի նետման ցուցանիշները բարելավվել են համապատասխանաբար՝ 125,90սմ-ով և 92,70սմ-ով: Աղջիկների աջ ձեռքով նետման արդյունքների աճը փորձարարական խմբում կազմել է 124,20սմ, ստուգողական խմբում՝ 97,70սմ, իսկ ձախ ձեռքով նետման ցուցանիշների աճը համապատասխանաբար՝ 115,10սմ և 86,30սմ:

Փորձարարական խմբում այդ ցուցանիշների աճն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ընտանեկան պայմաններում մեր կողմից առաջադրված վազքային վարժությունների, վազքերով շարժախաղերի, ցատկային վարժությունների, նետման պարբերաբար կիրառմամբ:

Այսպիսով, ընդհանրացնելով ստացված տվյալները, կարելի է եզրակացնել, որ ինչպես ֆիզիկական զարգացման ցուցանիշները, նախադպրոցականների շարժողական ակտիվությունը բնութագրող բնական շարժումները (քայլք, վազք, ցատկեր, նետում) ևս տարիքի հետ բարելավվում են: Դա հաստատվում է երեխաների օրգանիզմի տարիքային օնտոգենետիկ զարգացման օրինաչափություններով:

Ներդրված և փորձարկված մանկավարժական գիտափորձի արդյունքները վկայում են ծրագրի արդյունավետության մասին: Իսկապես, առաջարկվող ֆիզիկական դաստիարակության միջոցների պարբերաբար կիրառումը, դրանց համապատասխան չափավորումը և կատարման խիստ հսկողությունը նպաստեցին՝ առաջին հերթին ծնողների տեսական գրագիտության մակարդակի բարձրացմանը, երեխաների հետ համատեղ ֆիզիկական վարժությունների կատարման հմտությունների ձեռքբերման և երկրորդ, ծնողների ու երեխաների հստակ պլանավորված և մեթոդապես հսկվող համատեղ գործունեությունը խթանեց շարժողական գործունեությանն ու նպաստեց 2-4 տարեկան նախադպրոցականների շարժողական կատարելագործմանը:

Աշխատանքում կատարվել է առաջին փորձերից մեկը՝ մշակել հատուկ սանդղակներ՝ գնահատելու 2-4 տարեկան երեխաների հիմնական շարժումների կատարման քանակական և որակական կողմերը: Աղյուսակները բերված են ստենոսխեմատիկա: Դրանք բավականաչափ կարող են հեշտացնել դաստիարակների երեխաների հետ իրականացվող ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպումն ու հսկումը:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստացված փորձարարական նյութի հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Գրական աղբյուրների ուսումնասիրությունը, վերլուծությունը և ընդհանրացումը փաստեցին, որ մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում միշտ էլ կարևորվել է վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ընտանեկան դաստիարակությունը և ծնողների նախապատրաստումը դրան: Ներկա ժամանակաշրջանում այդ մոտեցումները նոր թափ են ստացել ընդհանուր մանկավարժության, հոգեբանության, առողջապահության և ֆիզիկական դաստիարակության ոլորտներում: Գրանցից յուրաքանչյուրը խնդրի լուծման համար առաջադրում է իր ուրույն հայեցակարգերը, որոնց հիմնավորումը առավել արդիական է:

2. Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության, առողջության ամրապնդման և պահպանման խնդիրների լուծումն ընտանիքի մերուժի, ընտանիք - մանկապարտեզ համագործակցության միջոցով դեռևս լիարժեք չի իրականացվում: Ֆիզիկական դաստիարակության ծրագրերում բացակայում են այդ աշխատանքի կազմակերպման ձևերը, մեթոդները և բովանդակությունը:

3. Բացահայտված է, որ ծնողներն ու ընտանիքի մեծահասակները պատրաստ չեն տեսական գիտելիքները, շարժողական կարողությունները և հմտությունները կիրառել վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

4. Ծնողների շրջանում անցկացված հարցումը փաստեց, որ նրանք ընտանեկան պայմաններում չեն պահպանում երեխաների համալիր դաստիարակության այնպիսի կարևոր միջոց, ինչպիսին է օրվա ռեժիմը և շարժողական ռեժիմը: Ծնողների 77,2 տոկոսը խախտում է երեխայի քնի ռեժիմը, 61,6 տոկոսը՝ կերակրման ռեժիմը, 30,4 տոկոսը՝ հիգիենիկ ընթացակարգերը, 59,7 տոկոսը՝ զբոսանքն ու խաղը: Մյուս կողմից, պարզվել է, որ ֆիզիկական դաստիարակության գործընթացում ծնողները կիրառում են շատ սահմանափակ ու միատարր միջոցներ: Երևան քաղաքի և Մյունիքի մարզի ծնողների միայն 6,1 տոկոսն են կարողանում թվարկել ֆիզիկական դաստիարակության հայտնի 4 միջոցներ, 11,1 տոկոսը՝ 3 և 13,9 տոկոսը՝ նշում են 1 - 2 միջոց:

5. Մեծահասակների շրջանում անցկացրած հարցումը ցույց տվեց, որ ավագ սերնդի ներկայացուցիչները՝ տատիկներն ու պապիկները ունեն ակտիվ դիրքորոշում թոռնիկների դաստիարակության, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության հարցերում, սակայն այդ երրուժն անհրաժեշտ չափով չի կիրառվում: Այսպես, Երևան քաղաքում իրենց թոռնիկների ֆիզիկական դաստիարակությամբ պարբերաբար զբաղվում են մեծահասակների 29,5, իսկ Մյունիքի մարզում՝ 12,6 տոկոսը:

6. Ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության մակարդակի բարձրացման մեխանիզմները դեռևս մշակված և արտացոլված չեն ֆիզիկական դաստիարակության ծրագրերում: Մյուս կողմից, այսօր դաստիարակների պատրաստվածությունը վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ թույլ է տեսական, գործնական և կազմակերպչական առումներով: Նրանց 56,7 տոկոսը չգիտեն, որ գոյություն ունեն ֆիզիկական պատրաստվածության և շարժողական գործողությունների գնահատման չափորոշիչներ: Բացահայտվել է նաև, որ նախադպրոցական կրթական հաստատությունը չի ապահովում երեխայի շարժողական ակտիվության բնական պահանջը և մեր հանրապետության երեխաների շարժողական ակտիվության ցուցանիշները զիջում են ԱՊՀ մի շարք երկրների (Ուկրաինա, Բելառուս, Ռուսաստան) իրենց հասակակիցների ցուցանիշներին:

7. Մշակվել է ծնողների և ընտանիքի մեծահասակների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման տեսական ու գործնական աշխատանքային ծրագիր, որի ներդրումը և ընտանեկան ֆիզիկական դաստիարակության իրականացումը նպաստեց.

7.1. ընտանեկան պայմաններում ֆիզիկական դաստիարակության համակարգի կազմակերպման և իրականացման վերաբերյալ ծնողների և ընտանիքի մեծահասակների տեսական գիտելիքների և գործնական կարողությունների մակարդակի բարձրացմանը,

7.2. երեխաների բնականոն ֆիզիկական զարգացման ընթացքին,

7.3. վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական շարժումների կայուն ձևավորմանը, ինչպես նաև տարբեր շարժողական ընդունակությունների՝ արագաշարժության, ցատկունակության, արագաուժային ընդունակությունների մշակմանը:

8. Ուսումնասիրությունը ցույց տվեց ծրագրի անհրաժեշտությունը, կենսունակությունը, մատչելիությունը և դրա անհրաժեշտությունը վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության պետական ծրագրում:

9. Բացահայտվեց և ապացուցվեց ինչպես նախադպրոցական կրթական հաստատության ու ընտանիքի, այնպես էլ ներընտանեկան ակտիվ համագործակցությունը երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

## **ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Նախադպրոցական կրթական հաստատության ֆիզիկական դաստիարակության ծրագրում անհրաժեշտ է ավելացնել մեր կողմից ընտանիքի անդամների համար կազմված երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ տեսական և գործնական աշխատանքների ծրագրերը:

2. Վաղ և նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության իրականացման համար անհրաժեշտ է կիրառել նախադպրոցական կրթական հաստատության և ընտանիքի համատեղ աշխատանքի առաջարկվող ձևերը, որոնք հնարավորություն կընձեռեն բարձրացնել ծնողների (ընտանիքի մեծահասակների) ֆիզկուլտուրային կրթվածության մակարդակը և ֆիզկուլտուրային արժեքները տեղափոխել ընտանիք ու ներդնել երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

3. Ծնողներին (ընտանիքի մեծահասակներին) մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով Երևանի և մարզկենտրոնների մանկական պոլիկլինիկաներում, նախադպրոցական հաստատություններում, հանգստի գոտիներում ստեղծել լուսավորչական կենտրոններ՝ ընդգրկելով մանկավարժների, հոգեբանների, բժիշկների (մանկաբույժների), ուլքեր կիրազեկեն ծնողներին (ընտանիքի մեծահասակներին) երեխայի դաստիարակության, առողջության ամրապնդման և պահպանման, առողջ ապրելակերպի, ֆիզիկական դաստիարակության իրականացման ձևերի ու մեթոդների մասին:

4. Առավելագույն օգտագործել ֆիզիկական կուլտուրայի քարոզչության բոլոր ձևերը՝ մարզական լրագրությունը, հեռուստատեսությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները և այլն: Գովազդներում ընդգրկել սյուժեներ ֆիզիկական դաստիարակության միջոցների՝ լողի, շարժախաղերի, մարզական խաղերի, դահուկի, չմշկասահքի, հեծանիվ վարելու, մարմնամարզության, մերսման, կոփման կիրառմամբ: Լայնորեն քարոզել և խրախուսել առաջավոր ընտանիքների, նախադպրոցական հաստատությունների փորձը:

5. Խթանել ծնողների (ընտանիքի մեծահասակների և մյուս անդամների) համար նախատեսված գիտամեթոդական, գիտահանրամատչելի գրականության հրատարակումը:

6. Մանկավարժական քոլեջների և բուհերի ուսումնական ծրագրերում վերանայել «Նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա» առարկայի ծրագրի բովանդակությունը՝ հաշվի առնելով նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաները, ընդլայնել ծնողների հետ աշխատանքի ձևերն ու բովանդակությունը: Կատարելագործել դաստիարակների պատրաստման տեսական և գործնական կողմերը, նրանցից պահանջել նախադպրոցական կրթական հաստատության ֆիզիկական դաստիարակության ծրագրով նախատեսված հիմնական շարժողական գործողությունների, սպորտային վարժությունների և մարզախաղերի տարրերի տեխնիկապես ճիշտ կատարման տիրապետում:

7. Հաստանացել է այն հանգամանքը, որ անհրաժեշտ է ստեղծել հանրապետական ընտանեկան հետազոտությունների կենտրոն, որը պարբերաբար կուսումնասիրի ընտանիքի ձևավորման գործունեության սոցիալ-մանկավարժական, բժշկահիգիենիկ,

սոցիալ-հոգեբանական, երեխաների խնամքի ու դաստիարակության, ամուսնական կյանքի նախապատրաստման, իրավաբանական, տնտեսական և այլ հարցեր՝ ժամանակին ի հայտ բերելով ընտանիքներին հուզող հիմնախնդիրները:

### **Ատենախոսության քննադով հրատարակված աշխատանքների ցանկ**

1. Արդիական հարցեր վաղ տարիքի երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ „Развитие физической культуры посредством передовых прикладных технологий. Материалы республиканской научно-практической конференции. Ереван: 2003.- с. 16-17.
2. Վաղ տարիքի երեխաների ծնողների ֆիզկուլտուրային կրթվածության բարձրացման ուղիները: Առողջարարական ֆիզիկական կուլտուրա և առողջ ապրելակերպ Երևան, 2004, - էջ 10-11:
3. Վաղ տարիքի երեխաների մերաման գործընթացի կազմակերպումը ընտանեկան պայմաններում: ՖԿՀՊԻ դասախոսների և աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքների ժողովածու նվիրված ինստիտուտի 60-ամյակին: Երևան, 2004. - էջ 38-40:
4. Ծնողների պատրաստակամությունը վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի երիտասարդ գիտնականների աշխատանքների ժողովածու : Երևան, 2004. - էջ 17-18:
5. Ծնողների վերաբերմունքը վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության նկատմամբ: ՖԿՀՊԻ 60-ամյակին նվիրված գիտական աշխատությունների 2-րդ ժողովածու: Երևան, 2005. - էջ 92-93:
6. Ավագ սերնդի մասնակցությունը վաղ տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացին: ՖԿՀՊԻ Հանրապետական XXXIV գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան 2007. - էջ 110-115:
7. Դաստիարակների պատրաստությունը նախադպրոցականների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործընթացում: ՖԿՀՊԻ Հանրապետական XXXV գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան 2008. - էջ 139-143:
8. Ծնողների ֆիզկուլտուրային կրթվածության մակարդակի բարձրացումը որպես երեխաների ընտանեկան ֆիզիկական դաստիարակության նախադրյալ: ՖԿՀՊԻ Հանրապետական XXXVI գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան 2009. - էջ 219-223:

ГУЛЯН АСМИК ЭДУАРДОВНА

СОТРУДНИЧЕСТВО СЕМЬИ И ДОШКОЛЬНЫХ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ  
УЧРЕЖДЕНИЙ В ПРОЦЕССЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ ДЕТЕЙ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук  
по специальности 13.00.02 – “Методика преподавания и воспитания”  
(физическая культура)

Защита состоится 20 сентября 2012г. в 14<sup>00</sup> на заседании  
специализированного совета по педагогике 020 ВАК при Армянском  
государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу:  
0010. г. Ереван, ул. Тигран Мец 17.

Р Е З Ю М Е

**Актуальность исследования.** Сегодня неоспорим тот факт, что в системе культурных ценностей, осваиваемых ребенком и школьником, полноправное место занимают ценности физического воспитания, овладение которыми во многом определяют здоровый образ жизни.

Особую актуальность физическое воспитание приобретает в дошкольном возрасте, где закладываются основы здоровья детей и создается фундамент их физического совершенствования. К сожалению, только 16% посещающих дошкольные образовательные учреждения (ДОУ) детей признаны здоровыми, большая часть их имеет различные отклонения опорно-двигательного аппарата (С.О.Филиппова, 2000; Г.А.Решетнева, О.С.Шнейдер, 2009). Дошкольные образовательные учреждения в нашей стране посещают лишь 20% сельских и до 40% городских детей. Фактически физическое воспитание дошкольников главным образом обеспечивается в семье и эти вопросы совершенно недостаточно освещены в научно-методической литературе. Также крайне поверхностные сведения имеются и в отношении сотрудничества семьи и ДОУ в деле обеспечения физического воспитания дошкольников. Именно

изучение этих вопросов подчеркивает актуальность данного исследования.

**Научная новизна исследования.** В диссертации решены ряд вопросов, еще не получивших освещение в нашей стране в исследованиях по физическому воспитанию детей дошкольного возраста. Определены уровни знаний и умений родителей для обеспечения процесса физического воспитания в семье. В практику семейного воспитания внедрена тематическая программа формирования знаний и умений для родителей и старших членов семьи. Разработана система совместного сотрудничества родителей и воспитателей ДОУ для формирования физкультурной грамотности.

**Теоретическая значимость.** Обоснованы необходимость и педагогические условия реализации семейного физического воспитания детей дошкольного возраста.

**Практическая значимость.** Заключается в повышении эффективности процесса физического воспитания детей дошкольного возраста в условиях семьи, расширении объема их двигательной активности и подготовленности, в формировании теоретических знаний родителей и старших членов семьи путем внедрения специально разработанных программ. Материалы исследования могут быть использованы в системе физического воспитания детей дошкольного возраста, при разработке соответствующих программ, а также в оздоровительных центрах и поликлиниках, занимающихся вопросами сохранения здоровья и физического воспитания детей 2-4 лет.

**Апробация и внедрение результатов.** Результаты исследования доложены и обсуждены на итоговых республиканских научно-методических конференциях, на конференциях “Оздоровительная физкультура и образ жизни”, “Развитие физкультуры с использованием новейших технологий”, на международной конференции в Киеве в период с 2004 по 2011гг. По теме диссертации опубликовано 8 работ и приложены 2 акта о внедрении результатов исследования в практику преподавания.



**HASMIK GHULYAN**

**COOPERATION OF FAMILY AND PRESCHOOL EDUCATIONAL  
INSTITUTIONS IN CHILDREN PHYSICAL EDUCATION**

**Thesis for candidate of Pedagogical Science degree, speciality 13.00.02 –  
“Teaching and Education Methodology” (Physical culture)**

**The defence of the thesis will take place on September 20, 2012 at 14<sup>00</sup> at the  
meeting of the specialised pedagogical committee 020 HAC for granting scientific  
degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan  
(address: Yerevan 0010, Tigran Mets str. 17 )**

**SUMMARY**

**The relevance of the research.** Today the disputed fact that the values of physical education take a worthy place in the system of cultural values developed by the child or pupil, which largely determines a healthy lifestyle.

Physical education receives a special relevance at the preschool age and forms the basis for children's health and their physical perfection. Unfortunately, only 16% of children attending preschool institutions are healthy, most of them have different locomotive system deviations. (S.O.Philipova, 2000, G.A.Reshetneva, O.S.Shnider, 2009). Only 20% rural and 40% urban children attend preschool educational institutions in our country. In fact, physical education of preschool children is mainly provided by the family and these issues are not entirely covered in the scientific and methodological literature. There is also very superficial information on the cooperation of the family and preschool educational institutions to provide the preschool age children's physical education. Namely the study of these issues stresses the relevance of this research work.

**Scientific novelty.** The dissertation solved several issues still have not been covered in research on physical education of preschool age children in our country.

The levels of parents' knowledge and skills to ensure the process of physical education in the family have been identified. Topical program of knowledge and skills for the parents and older family members have been introduced into the practice of family education. A system of mutual cooperation of parents and educators to form a preschool physical knowledge was developed.

**Theoretical importance.** The need and the pedagogical conditions for the realization of preschool age children's family physical education have been proved and tasted.

**Practical importance.** This means to increase the effectiveness of preschool children's physical education in the family, to expand their physical activity and readiness, to provide parents' and older family members' theoretical knowledge through the special developed programs. The research materials can be used in developing appropriate programs for the physical education of preschool children, as well as in health centers and clinics dealing with 2-4 year - old children's health and physical education.

**Testing and implementation of results.** The results were reported and discussed in the conclusive national scientific and methodological conferences, in the conferences "Remedial Gymnastics and way of life" "Development of physical culture with the help of new technologies", in the international conferences held in Kiev in the period 2004-2011. 8 articles have been published on the topic of dissertation and two acts have been applied to the implementation of research results in teaching process.

The thesis consist of an introduction, three chapters, conclusions, methodological recommendations, bibliography and appendices. The volume of the research total 141 pages.